ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ

Վատիկան

Հոգեկան խոր մխիթարությամբ և շնորհակալությամբ ստացանք Ձեր հեռագիրը՝ Եփեսոս Ձեր ուխտագնացության առիթով: Ձերդ Սրբության Եփեսոս և Կ. Պոլիս այցելությունը խոր հուզում կպատճառե Մեզի, մեր եկեղեցիին, և կխորհինք թե նաև համայն քրիստոնեության, որովհետև մեր փոթորկահույզ օրերուն այժմեական խորհուրդ մը կպարունակե իր մեջ մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի անձին մեջ ամբողջ աշխարհի դավանումը իբրև Աստված և իբրև մարդ:

Ձեր այս ուխտագնացության համար բոլորս երախտապարտ ենք Ձեզի:

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցվո, հաճեցեք ընդունիլ Մեր սերը, Մեր հարգանքը և ամենաբարի մաղթանքները Ձեր սուրբ առաքելության փայլուն հաջողություններու համար:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 դեկտեմբերի 1979 թ.